ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ ՇՊՀ), ի դեմս ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Երվանդ Սերոբյանի, ով գործում է ՇՊՀ Կանոնադրության հիման վրա՝ մի կողմից և «ԲԻՕՆ ԲԻԶՆԵՍ ԱԿԱԴԵՄԻԱ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ «ԲԻՕՆ ԲԻԶՆԵՍ ԱԿԱԴԵՄԻԱ»), ի դեմս տնօրեն Տիգրան Մինասյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով միջբուհական համագործակցության ապահովման, կողմերի գիտատեխնիկական և կադրային կարողությունների լիարժեք օգտագործման և առաջավոր փորձի փոխանակման անհրաժեշտությունը, կնքեցին համագործակցության հուշագիր (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. Հուշագրի առարկան

1.1. Հուշագրի առարկան Կողմերի համագործակցության նպատակի, գործընկերության հիմնական ուղղությունների, Կողմերի իրավունքների և պարտականությունների սահմանումն է:

2. Հուշագրի նպատակը և համագործակցության հիմնական ուղղությունները

2.1. Հուշագրի նպատակը Կողմերի միջև կրթական և գիտահետազոտական ոլորտներում գործընկերային հարաբերությունների հաստատումն է, համագործակցության ծրագրերի իրականացումը՝ Հուշագրի 2.2. կետում նախատեսված ուղղություններով:

2.2. Կողմերի համագործակցության հիմնական ուղղություններն են.

ա/ ՇՊՀ-ում և «ԲԻՕՆ ԲԻԶՆԵՍ ԱԿԱԴԵՄԻԱ»-ում իրականացվող կրթական ծրագրերի մասին տեղեկությունների տրամադրում,

բ/ ՇՊՀ-ում և «ԲԻՕՆ ԲԻԶՆԵՍ ԱԿԱԴԵՄԻԱ»-ում մշակված առարկայական ծրագրերի, կրթական ծրագրերի արտաքին փորձագիտական գնահատման աշխատանքների իրականացում,

գ/ կրթական ծրագրերի և/կամ առանձին դասընթացների համատեղ մշակում՝ սովորողների համար հնարավորություններ ստեղծելով կրթություն ստանալու նաև հեռաուսուցման միջոցով,

դ/ սովորողների և դասախոսների մասնագիտական վերապատրաստումների, վարպետության դասերի, կլոր սեղանների, թեմատիկ բանավեճերի կազմակերպում,

ե/ համատեղ գիտահետազոտական ծրագրերի իրականացում,

զ/ ՇՊՀ-ի և «ԲԻՕՆ ԲԻԶՆԵՍ ԱԿԱԴԵՄԻԱ»-ի գիտական ամսագրերում համատեղ ուսումնագիտական հետազոտությունների արդյունքների հրատարակում.

է/ Կողմերի ուսանողների գիտահետազոտական, գիտամանկավարժական, ուսումնական արտադրական պրակտիկաների փոխադարձ կազմակերպում,

ը/ սովորողների ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի փոխադարձ ղեկավարում և գրախոսում, գիտակրթական և մեթոդական գրականության ու մասնագիտական զարգացմանը նպաստող էլեկտրոնային աղբյուրների տրամադրում, գիտական աշխատությունների, դասագրքերի, ուսումնական նյութերի, ուսումնամեթոդական ձեռնարկների մշակում և խմբագրում,

թ/ համատեղ հանրապետական և միջազգային գիտաժողովների կազմակերպում,

ժ/ համատեղ կրթական, գիտական ուղղվածության դրամաշնորհային ծրագրերի իրականացում,

ժա/ մյուս Կողմին արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում որպես գործընկեր ներգրավում,

ժբ/ Կողմերի իրականացրած այլ կրթական, գիտական, մշակութային ծրագրերին, կազմակերպած միջոցառումներին մասնակցություն:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1.Կողմերն իրավունք ունեն հանդես գալու Հուշագրով նախատեսված միջոցառումների կազմակերպման ու անցկացման նախաձեռնողի դերում:

3.2.Համագործակցության նպատակով, Հուշագրի հիման վրա, Կողմերը պարտավորվում են.

ա/ ժամանակին միմյանց փոխանցել համապատասխան տեղեկատվություն, որը վերաբերում է Հուշագրով նախատեսված համատեղ ծրագրերի ու միջոցառումների անցկացմանը,

բ/ անվճար հիմունքներով խորհրդատվություն տրամադրել ծրագրի ու միջոցառումների կազմակերպման ու անցկացման հարցերում,

գ/ ապահովել անհրաժեշտ նյութական բազա և պայմաններ՝ համատեղ ծրագրեր իրականացնելու և միջոցառումներ անցկացնելու համար,

դ/ նախօրոք տեղյակ պահել միմյանց համագործակցության ընթացքում առաջացող խնդիրների միասին և համատեղ ուժերով ապահովել դրանց լուծումը:

4. Հուշագիրն ուժի մեջ մտնելու և գործողության ժամկետները

4.1. Հուշագիրը բաղկացած է 3 էջից և ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

4.2.Հուշագիրը կազմված է հայերեն երկու հավասարազոր օրինակներից, և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

4.3. Հուշագիրը կնքվում է 5 տարի ժամկետով: Ժամկետը լրանալուց հետո, եթե որևէ Կողմից այլ առարկություն չի լինում, ապա Հուշագրի գործունեության ժամկետն ինքնըստինքյան շարունակվում է ևս 5 տարի:

4.4. Հուշագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

4.5. Կողմերից մեկի նախաձեռնությամբ Հուշագրի դադարեցման անհրաժեշտության դեպքում մյուս Կողմը պետք է տեղեկանա այդ մասին գրավոր՝ ենթադրյալ լուծման պահից առնվազն 10 օր առաջ:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1.Հուշագիրը Կողմերի համար որևէ ֆինանսական պարտավորություն չի առաջացնում:

6. Կողմերի իրավաբանական հասցեները

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ	«ԲԻՕՆ ԲԻԶՆԵՍ ԱԿԱԴԵՄԻԱ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Գյումրի, փ. Պ. Սևակի-4	Հասցե՝ ք. Գյումրի, Գորկու 26/77
Էլ. Հասցե՝ info@shsu.am	Էլ. Փոստ՝ beonacademy@gmail.com
Հեռ.՝ +374 312 6 94 94	Հեռ.՝ +374 98 96 33 56
Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար՝ Երվանդ Սերոբյան	Տնօրեն՝ Տիգրան Մինասյան
Կ.Տ.	Կ.Տ.
«30» 09 2021թ.	«30» 09 2021թ.